

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՆԳԼԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

ՇԱՀԻՆՅԱՆ Ա. Լ.

Առանձին լեզուների կառուցվածքները տարբեր կերպ են անդրադառնում լեզվական ընտրողականության վրա: Կան լեզուներ, որոնք հակված են միննույն իրադրությունն արտահայտելու ավելի սեղմ կամ ավելի ընդարձակ: Անգլերենը, օրինակ, պատկանում է այն լեզուների շարքին, որոնք հնարավորինս սեղմ են արտահայտում իրադրությունը: Հայերենը, ընդհակառակը, շատ դեպքերում միննույն իրադրությանը տալիս է նըկարագրական մեկնաբանություն: Այս առանձնահատկությունները թերևս կարող են նշանակություն չունենալ գեղարվեստական գրականության կամ ընդհանրապես արձակի համար, սակայն խիստ կարևոր են թարգմանության մեջ, հատկապես բանավոր թարգմանության պարագայում, երբ այն սահմանափակված է ժամանակային գործոնով:

Լեզվի սեղմ արտահայտման հակումը դիտարկվում է լեզվական տարբեր մակարդակներում՝ սկսած ամենացածր մակարդակից: Անգլերենում այս հատկությունը հայտնաբերվում է ինչպես հնչյունական, այնպես էլ հատկապես ձևաբանական և բառային, ինչպես նաև շարահյուսական և իմաստային մակարդակներում:

Ներկայացնենք անգլերենի և հայերենի որոշ բայախմբեր և հայերենից անգլերեն նրանց թարգմանության ժամանակ խտացման հասնելու հնարավորությունները: Խտացման տեսակետից հատուկ հետաքրքրություն ունի լեզվի բայական համակարգը:

Անգլերենում կան մի շարք բայեր, որոնք հայերենում հիմնականում պահանջում են նկարագրական թարգմանություն: Դրանք իրենց իմաստային դաշտում հիմնականում հատկանշվում են այն իմաստային բաղադրիչների առկայությամբ, որոնք հայերենում համապատասխանում են մեկից ավելի բառային միավորների իմաստային դաշտերին: Այդ իսկ պատճառով նմանատիպ բայերը անգլերենից հայերեն թարգմանության պարագայում ստեղծում են խտացման լայն հնարավորություն, մինչդեռ հակառակ թարգմանության ժամանակ ավելի ծավալուն են դարձնում խոսքը, քանի որ հայերենում հիմնականում ստանում են նկարագրական մեկնաբանություն՝ անգլերենի մեկ բային համապատասխանում է հայերենի բայական կապակցություն:

Անգլերենում խտացման հնարավորություն են ստեղծում՝ 1. բայեր, որոնք իրենց իմաստային դաշտում պարունակում են գործողության կատարման ձևի իմաստային բաղադրիչը, 2. այսպես կոչված՝ «շարժման» բայերի մի մեծ խումբ, 3. կոնվերսիվներ. հիմնականում գոյականի հիմքից առաջացած համապատասխան բայերը՝ զրո վերջավորությամբ: Նշված դեպքերում խտացումն իրականանում է տարբեր լեզվական մակարդակներում: Առաջինում այն ի հայտ է գալիս իմաստային բաղադրիչների

միավորման հաշվին: Այստեղ կարելի է խոսել բառային-իմաստային խըտացման մասին (*lexical – semantic compression*): Երկրորդում խտացումը առաջ է գալիս բառային մակարդակում՝ բառային խտացում (*lexical compression*): Երրորդում այն կրում է ձևաբանական բնույթ (*morphological compression*):

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ նշված խմբերին պատկանող ոչ բոլոր բայերն են անգլերենում ստեղծում խտացման հնարավորություն: Կան բազմաթիվ բայեր, որոնք հայերենում ունեն իրենց համապատասխան նույնարժեքները, և անգլերենից հայերեն թարգմանության պարագայում հայերենում պարտադիր չէ դիմել նկարագրական կամ ընդարձակ թարգմանության: Այնուամենայնիվ, պրպտումներն ի հայտ են բերում այս բայախմբերին պատկանող բայերի հստակ բազմություն, որոնք այս կամ այն որոշակի հատկանիշի հիման վրա կարող են միավորվել մեկ խմբի մեջ՝ դիտարկվելով որպես տվյալ լեզվում խտացմանը նպաստող բայեր:

Բայերը, ինչպես հայտնի է, իրենց խոսքամասային իմաստով արտահայտում են որոշակի գործողություն, եղելություն, ընթացք: Դրանք, կարելի է ասել, «գործուն» իմաստ են արտահայտում: Ընդ որում, ակնհայտ է, որ բայ խոսքի մասին պատկանող բառային միավորները միմյանց հետ խմբավորվում են ըստ որոշակի հատկանիշի՝ ստեղծելով իմաստային ենթախմբեր: Այսպես, օրինակ, անգլերենին հատուկ է «նայել» ընդհանուր իմաստն արտահայտող բայաշարք, որի կազմի մեջ մտնող բայերը տվյալ ենթախմբի մեջ միավորվում են ըստ գործողության կատարման, այսինքն՝ «նայելու», ձևի հատկանիշի:

Merriam Webster Online Thesaurus բառարանը¹ տալիս է *watch* բայի հետևյալ իմաստային հոմանիշների շարքը. *Watch – eye – observe – behold – look – regard – see – view; – gape –gawk – gaze – glare – gaggle – peer – rubberneck – stare; – guard – wake – ward; – monitor – read; – spy; – glance – glimpse – peek – peep*. Թերևս այս շարքը կարելի է համարել: Այս բոլոր բայերը միավորվում են իմաստային ընդհանրությամբ՝ արտահայտում են «նայել», «դիտել» իմաստը: Միմյանցից տարբերվում են միայն գործողության կատարման ձևի իմաստային բաղադրիչով: Եվ հենց այդ իմաստային բաղադրիչի առկայությունն էլ անգլերենի մեկ բայի իմաստային դաշտում հաճախ հանգեցնում է հայերենի նկարագրական թարգմանությանը, քանի որ հայերենում բացակայում է համապատասխան իմաստն արտահայտող (իմաստային բաղադրիչը պարունակող) մեկ բառային միավորը:

Թերևս նման դեպքերում կարելի է խոսել տարբեր լեզուների՝ իրադրությունը առավել կամ պակաս մասնավորեցնելու հատկության մասին: Տվյալ պարագայում անգլերենը երբեմն մեկ բառային միավորի մեջ դնում է այն իմաստային բաղադրիչները, որոնք հայերենում բացարձակ նույնարժեքով՝ մեկ բառով, արտահայտվել չեն կարող, քանի որ նման դեպքե-

¹ Merriam Webster Online Dictionary and Thesaurus: *Slū* <http://www.m-w.com>

րում հայերենին ավելի հասուկ է իմաստի ընդհանրացումը, իսկ անգլերենին՝ մասնավորեցումը:

Բերված բայաշարքից փորձենք հայերեն թարգմանել բայերից մի քանիսը².

Eye	-	ուշադրությամբ՝ հառած աչքերով նայել, տնտղել, զննել /հայացքով/, դիտել
gape	-	բերանը բաց անել զարմանքից, բերանբաց նայել
gaze	-	լարված՝ աչքերը հառած նայել, ակնապիշ նայել, խոր դիտել
glare	-	լարված կամ կատաղի նայել
peer	-	լավ դիտել, հայացքով զննել, ուշադրությամբ նայել
rubberneck	-	(ամերիկ. խսկց.) հետաքրքրությամբ նայել, (բանազի) վիզը (հետաքրքրությունից) ծռած նայել
stare	-	ապշած կամ սնեռուն հայացքով նայել, աչքերը չռել (մի բանի վրա՝ զարմանքից, վախից և այլն)
peep	-	փոքր անցքի միջից նայել, արագ հայացք գցել (մի բանի վրա)
peek	-	գաղտագողի, ծածուկ կամ հարևանցի նայել
glimpse	-	նշմարել, աչքովն ընկնել, երևալ ու չքանալ, առկայծել, փայլկտալ:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ անգլերեն-հայերեն բառարանն այս բայերին տալիս է հիմնականում նկարագրական թարգմանություն: Անգլերենն այս դեպքում մասնավորեցնում է բառի իմաստը՝ յուրաքանչյուր բայի իմաստին ավելացնելով գործողության կատարման ձևի իմաստային բաղադրիչը: Ինչ վերաբերում է հայերենին, ապա բերված թարգմանություններից երևում է, որ գործ ունենք գործողության ընդհանուր իմաստն արտահայտող «նայել», «դիտել» բայերի հետ, որոնք հանդես են գալիս համապատասխան մակբայական կամ բայական կապակցություններում:

Միննույն երևույթը նկատում ենք «շարժման» բայերի բավական մեծ խմբի՝ անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ: Շարժում արտահայտող բայերն անգլերենում կարելի է համախմբել մեկ կարևոր հատկանիշով: Դրանք հիմնականում արտահայտում են շարժման ձևը: Դա կարող է կրել շարժման կատարման ընթացքում որոշակի ձայնային ուղեկցության կամ դրա որակի, շարժման ձևի հատկանիշը: Բազմաթիվ «շարժման» բայեր արտահայտում են նաև գործողության կատարման միջոցի հատկանիշը:

Այս բայերի մեծ մասն անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ սովորաբար պահանջում է բացատրական կամ նկարագրական թարգմանություն: Հետևաբար, հայերենից անգլերեն թարգմանության ընթացքում թարգմանիչը կարող է օգտվել դրանց ընձեռած խտացման հնարավորությունից: Բերենք օրինակներ.

² Անգլերեն-հայերեն թարգմանությունները վերցված են Հ. Ասմանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի Անգլերեն – հայերեն բառարանից (Ե., 1984):

- to coast - ասփի երկարությամբ լողա
- to canter - թեթև արշավով՝ քառատրոփ ընթանալ
- to creep - գաղտագողի մոտենալ, հազիվհազ շարժվել (ծերերի ու հիվանդների մասին)
- to shuffle - քստքստացնել ոտքերով, քարշ տալ ոտքերը
- to tiptoe - մատների ծայրերի վրա ման գալ, գաղտագողի անցնել, գողունի՝ ծածուկ մտնել
- to flounder - դժվարությամբ, սայթաքելով քայլել
- to hurtle - աղմուկով թռչել՝ սլանալ
- to encroach - ներխուժել, ոտնձգություն անել ուրիշի իրավունքի, ունեցվածքի վրա
- to stomp - դղրդալով, աղմուկով անցնել
- to lumber - դղրդալով, աղմուկով անցնել
- to strut - հպարտ՝ վեհակերպ տեսքով անցնել
- to stride - լայն քայլերով անցնել
- to trudge - հոգնած՝ դժվարությամբ քայլել, հազիվհազ քարշ գալ
- to sprint - մեծ արագությամբ կարճ տարածության վրա վազել
- to zoom - ուղղաձիգ վեր խոյանալ՝ վեր սլանալ, բարձրանալ, ուղղաձիգ բարձրանալ

Օրինակներից պարզ է դառնում, որ անգլերենի շարժում արտահայտող բայերն իրենց իմաստային դաշտում արդեն պարունակում են շարժման կատարման ձևի իմաստային բաղադրիչը, մինչդեռ հայերենը հաճախ ստիպված է դիմել նկարագրական կամ բացատրական թարգմանության: Իհարկե, դա չի նշանակում, որ հակառակը հնարավոր չէ:

Անգլերենին հատուկ են մի շարք շարժում արտահայտող բայեր, որոնք առաջ են գալիս լեզվին հատուկ կոնվերսիայի հետևանքով, և որոնց կիրառությունը հայերենից անգլերեն թարգմանության ժամանակ նպաստում է խտացմանը: Նման բայերը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի խմբի.

ա) Բայեր, որոնք որևէ կերպ առնչվում են շարժումն իրականացնող տրանսպորտի միջոցի հետ: Կարող են արտահայտված լինել տրանսպորտի միջոցի անվանմամբ կամ արտահայտել այդ միջոցով երթևեկման իմաստ կամ էլ արտահայտվել այդ միջոցի որևէ բաղադրիչ մասի անվանմամբ: Ինչպես՝

- to balloon - օդապարիկով բարձրանալ
- to boat - նավակով զբոսնել, նավակով փոխադրել
- to bus - ավտոբուսով գնալ
- to cab - կառքով ճանապարհորդել
- to canoe - նավարկել մակույկով
- to coach - գնալ (գնացքով, կառքով, ավտոբուսով)
- to ferry - լաստանավով փոխադրել, մի ասփից մյուսն անց կացնել, լաստանավով անցնել, փոխադրել (ինքնաթիռները օդով)
- to parachute - պարաշյուտով իջնել՝ իջեցնել
- to yacht - զբոսանավով ման գալ՝ զբոսնել, սպորտանավային մրցության մասնակցել

Ինչպես երևում է բերված օրինակներից, հայերեն թարգմանությունները արտահայտված են «բայ + միջոցի անուղղակի խնդիր» կապակցություններով՝ ներկայացնելով բուն գործողությունը և դրա կատարման միջոցը, մինչդեռ անգլերենն այս երկու իմաստային բաղադրիչները կենտրոնացնում է մեկ բառի իմաստային դաշտում:

բ) Բայեր, որոնք ժամանակին մուտք են գործել լեզու, որպես նորաբանություններ և ժամանակակից անգլերենի բայական համակարգում տեղ են գրավել գոյականՈրբայ՝ զրո վերջավորությամբ՝ կոնվերսիայի շնորհիվ: Օրինակ.

To subway to 64 th Street	-	մետրոյով գնալ մինչև 64-րդ փողոց
To ambulance	-	շտապ օգնության մեքենայով տանել հիվանդանոց
To whirlwind across the US	-	հողմապտույտի պես անցնել Միացյալ Նահանգների վրայով
To flag	-	դրոշակ բարձրացնել
To elevator/escalator somewhere	-	վերելակով, վերամբարձ սարքով
-	-	բարձրացնել/ շարժասանդուղքով բարձրացնել, տեղափոխել
To postcard	-	բացիկ, բաց նամակ ուղարկել

գ) Նորաբանությունների շարքին են պատկանում նաև այնպիսի բառային միավորներ, որոնց թարգմանության համար թարգմանիչը պետք է որոշակի գիտելիքներ ունենա տվյալ երևույթի մասին: Նման բառային միավորները կարող են հատուկ լինել տվյալ լեզվական հանրությանը կամ որևէ կոնկրետ երկրին ու նրա մշակույթին: Բնականաբար, նոր երեվույթների առաջացումն իր անխուսափելի արտացոլումն է գտնում լեզվում: Նման բառային միավորները հաճախ պահանջում են բացատրական թարգմանություն: Ինչպես՝

to Greyhound	-	ճանապարհորդել Greyhound ընկերության տրանսպորտով /ավտոբուսով/
to Air California	-	մեկնել Air California ավիաուղիների ինքնաթիռով/ օգտվել Air California ավիաուղիների ծառայությունից
to Concorde	-	ճանապարհորդել Կոնկորդ ընկերության օդանավով

դ) Նորաբանությունների թվին կարելի է դասել նաև բայերի մի հսկայական խումբ, որոնք արտահայտում են «պարել» իմաստն անգլերենում: Լևինը դրանք անվանում է *Waltz Verbs*³, որոնք ցույց են տալիս որոշակի պար պարելու իմաստը: Խտացման տեսակետից դրանց հետաքրքրությունն այն է, որ հայերենում դրանք հիմնականում պահանջում են նկարագրական թարգմանություն, մինչդեռ անգլերենը հակում ունի ցանկացած պարի անվանում կիրառելու որպես բայ դրանով իսկ խտացնելով հաղորդակցությունը: Օրինակ.

³ Levin B. *English Verb Classes and Alternations: A Preliminary Investigation*, Chicago, IL, 1993.

to samba	-	պարել սամբա՝ լատինաամերիկյան պար
to rumba	-	պարել ռումբա՝ լատինաամերիկյան պար
to tango	-	պարել տանգո

Լևինը բերում է հետևյալ օրինակը. *The couple waltzed to the window.* Թարգմանաբար այս նախադասությունը կարող է հնչել. «Չույզը, վալս պարելով, մտնեցավ լուսամուտին»:

Այսպիսով, անգլերենի կառուցվածքային արանձնահատկությունները թույլ են տալիս ի հայտ բերել որոշակի բայախմբեր, որոնք անգլերենից հայերեն թարգմանության պարագայում հիմնականում պահանջում են բացատրական կամ նկարագրական թարգմանություն: Հետևաբար, դրանց կիրառությունը հայերենից անգլերեն թարգմանության մեջ թույլ է տալիս խտացնել հաղորդակցությունը:

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ГЛАГОЛЬНОЙ
СИСТЕМЫ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА ПРИ ПЕРЕВОДЕ С АРМЯНСКОГО ЯЗЫКА НА
АНГЛИЙСКИЙ**

ШАГИНЯН А. Л.

Резюме

Некоторые группы глаголов при переводе с армянского языка на английский дают возможность компрессировать сообщение. В числе таких глаголов рассматриваются глаголы движения и конверсивные глаголы, образованные на основе существительных. В английском языке эти глаголы содержат семы движения и способа движения. Подобные глаголы характерны для английского языка и не имеют прямых соответствий в армянском, требуя описательного перевода. При обратном переводе, с английского языка на армянский, наличие таких глаголов в сообщении приводит к декомпрессии.